


Մեկնարկել է որակավորման քննություններին մասնակցելու դիմումների ընդունումը

08.04.2026 14:46



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.04.2026 թվականի թիվ 1-Լ որոշմամբ հաստատվել են որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցերը:

1. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները 2026 թվականի առաջին կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2026թ. ապրիլի 9-ից մինչև 2026թ. ապրիլի 20-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):

2. «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձինք 2026 թվականի առաջին կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2026թ. ապրիլի 9-ից մինչև 2026թ. ապրիլի 20-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 31-րդ կամ 32-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):

• **Բեռնել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը**

• **Բեռնել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ**

**Կետերում նշված անձանց որակավորման
քննությունների կազմակերպման և
անցկացման ժամանակացույցը**

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })